

**«ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԲԸ-ԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նախագիծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ**

..... 2019 թվականի N ..... - Լ

**«ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԲԸ-ԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՀՈՂԱՄԱՍ  
ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 21-ը դեկտեմբերի 2017 թվականի N 1679-Ն որոշման 3-րդ կետով հավանության արժանացած՝ «Կառավարության աջակցության համաձայնագրի» դրույթները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող՝ 05-065-0145-0012 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասից 32.6591 հեկտար մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր)՝ նպատակային նշանակության փոփոխումից հետո կադաստրային արժեքով «Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) ուղղակի վաճառքի միջոցով օտարելուն՝ որպես պետություն-համայնք-մասնավոր համագործակցություն:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը (այսուհետ՝ Հողամաս) կարող է օգտագործվել բացառապես Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի

Նիստի N 53 արձանագրության 37-րդ կետով հավանության արժանացած ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 1679-Ն որոշմամբ սահմանված կարգով Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային ծրագրի գնման ընթացակարգի արդյունքում արևային ֆոտովոլտային կայանի կառուցման և շահագործման նպատակով և դրա նպատակային նշանակությանը համապատասխան.

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի համայնքի ղեկավարին`

- սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում ապահովել Հողամասի նպատակային նշանակության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոփոխումն Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների ու Էներգետիկայի գործառնական նշանակության հողերի.
- սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված աշխատանքների ավարտից հետո տասնօրյա ժամկետում Ընկերության հետ համատեղ ապահովել սույն Հողամասի օտարման պայմանագրի սահմանված կարգով կնքումը` պայմանագրում նախատեսելով նաև սույն որոշման 2-րդ կետում և 3-րդ կետի 3)-րդ ենթակետում նշված պայմանները, ինչպես նաև այն, որ պայմանագրի նոտարական վավերացման և դրանցից բխող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված` օրենքով սահմանված համապատասխան վճարներն ու տուրքերը պետք է վճարվեն Ընկերության միջոցների հաշվին:
- Հողամասի օտարման պայմանագիրը սահմանված կարգով կնքելու օրվանից հետո վեց տարվա ընթացքում Ընկերության կողմից Հողամասը նպատակային նշանակությամբ չօգտագործելու, ինչպես նաև Հողամասի օտարման պայմանագրի պայմանները խախտելու պարագայում` մեկ տարվա ընթացքում ապահովել Հողամասի նպատակային նշանակության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոփոխումն գյուղատնտեսական նշանակության (հողատեսքը` արոտավայր) հողերի: